



ՏԵՂԵԿԱՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՏԵՂԵԿԱՆՔ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	1
2. ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ	3
3. ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ	7
4. ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ	15
5. ԱՄՓՈՓՈՒՄ	16

1. ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Համայնքային բյուջեի կատարողականը արտացոլում է տնտեսական քաղաքականության հիմնական արդյունքները՝ ձեռքբերումները կամ կորուստները: Այս առումով մտահոգիչ է այն հանգամանքը, որ Երևան քաղաքի 2019թ. բյուջեի կատարողականը պարունակում է մի շարք խնդրահարույց կետեր: Թերացումներ են արձանագրվել թե՛ եկամուտների հավաքագրման, թե՛ ծախսերի կատարման մասով: **Բյուջեն թերակատարվել է: Եկամուտների թերհավաքագրումը հիմնականում կապված է այլ եկամուտներ հողվածով արձանագրված ցածր կատարողականով: Ինչ վերաբերում է ծախսերին, ապա պատկերն առավել մտահոգիչ է, քանի որ թե՛ տնտեսագիտական, թե՛ գործառնական դասակարգման գրեթե բոլոր ծախսային հողվածները փաստացի կատարողականներով թերակատարվել են ճշտված պլանի ցուցանիշների նկատմամբ: Ընդ որում, ըստ Երևանի քաղաքապետարանի կողմից հրապարակված բյուջեի կատարման հաշվետվության՝ նախատեսված և փաստացի կատարված ծախսերի տարբերությունները հիմնականում պայմանավորված են գնումների գործընթացում առաջացած խնայողություններով, մի շարք պատվիրակված լիազորությունների չկատարմամբ, ինչպես նաև որոշ ծրագրերի չիրականացմամբ:**

Ըստ Երևանի քաղաքապետարանի կողմից հրապարակված բյուջեի կատարման հաշվետվության՝ Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեի փաստացի եկամուտները կազմել են 75.0 մլրդ դրամ: Եկամուտների հավաքագրման փաստացի կատարողականը ճշտված պլանի նկատմամբ (86.4 մլրդ դրամ) կազմել է 86.8%: Այլ կերպ ասած՝ եկամուտների հավաքագրումը ճշտված պլանի նկատմամբ թերակատարվել է 11.4 մլրդ դրամով կամ 13.2%-ով: Երևանի 2019թ. բյուջեի հաստատված պլանով նախատեսվել էր 83.1 մլրդ դրամի եկամուտներ: 2019-ի փաստացի կատարողականը հաստատված պլանի նկատմամբ եկամուտների հավաքագրման մասով կազմել է 90.3%: Համեմատելով եկամուտների հավաքագրման փաստացի կատարողականը ճշտված պլանի և հաստատված պլանի ցուցանիշների նկատմամբ՝ հատկանշական է, որ փաստացի ցուցանիշը ավելի բարձր կատարողական է ցուցաբերել հաստատված պլանի նկատմամբ, քան ճշտված պլանի նկատմամբ:

Ըստ Երևան քաղաքի 2019թ. բյուջեի կատարողականի, փաստացի ծախսերը կազմել են 66.8 մլրդ դրամ՝ ճշտված տարեկան պլանի 94.7 մլրդ դրամի և հաստատված տարեկան պլանի 84.3 մլրդ դրամի դիմաց: Սա նշանակում է, որ փաստացի ծախսերը կազմել են ճշտված պլանի ցուցանիշի 70.5%-ը և հաստատված

պլանի ցուցանիշի 79.2%-ը: Փաստացի ծախսերը թերակատարվել են ճշտված տարեկան պլանի ցուցանիշի նկատմամբ 27.9 մլրդ դրամով, իսկ հաստատված տարեկան պլանի ցուցանիշի նկատմամբ՝ շուրջ 17.5 մլրդ դրամով: **Հարկ է նկատել, որ ինչպես եկամուտների պարագայում, փաստացի ծախսերը նույնպես ճշտված պլանից շեղվել են ավելի մեծ չափով, քան հաստատվածից:** Նշենք նաև, որ Երևանի բյուջեի ծախսերի փաստացի ցուցանիշը 2018թ. կազմել է 62.8 մլրդ դրամ, որը տվյալ տարվա ճշտված պլանի 73.4%-ն է: Չնայած այն հանգամանքին, որ Երևանի բյուջեի փաստացի ծախսերը 2019-ին 2018-ի համեմատ ավելի է շուրջ 3.9 մլրդ դրամով, հատկանշական է այն փաստը, որ 2019-ի փաստացի տվյալներով ծախսերի թերակատարումը ճշտված պլանի ցուցանիշի նկատմամբ ավելի բարձր է եղել, քան 2018-ին:

Աղյուսակ 1. Երևանի 2019թ. բյուջեի հիմնական ցուցանիշները և կատարողականը¹, մլն դրամ

	Տարեկան հաստատված պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստացի	Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ
Եկամուտները, այդ թվում՝	83,077.6	86,408.8	75,030.7	86.8%
Վարչական բյուջե	81,066.3	84,392.2	75,003.0	88.9%
Ֆոնդային բյուջե	4,534.7	4,488.8	27.7	0.6%
Ծախսերը, այդ թվում՝	84,346.8	94,690.7	66,760.8	70.5%
Վարչական բյուջե	81,066.3	84,392.2	65,575.1	77.7%
Ֆոնդային բյուջե	5,803.9	12,770.7	1,185.7	9.3%
Ընդամենը հավելուրդը կամ պակասուրդը	-1,269.2	-8,281.9	8,269.9	-

Փաստացի հավաքագրված եկամուտները և փաստացի կատարված ծախսերը թե՛ վարչական բյուջեով, թե՛ ֆոնդային բյուջեով մեծ թերակատարում ունեն տարեկան ճշտված պլանի ցուցանիշների նկատմամբ: Եկամուտների մասով փաստացի կատարողականը վարչական բյուջեով թերակատարվել է տարեկան ճշտված պլանի ցուցանիշի նկատմամբ 9.4 մլրդ դրամով կամ 11.1%-ով: Ֆոնդային բյուջեով

¹ Վարչական և ֆոնդային բյուջեների գումարն ավելի մեծ է, քան ընդամենը բյուջեինը, քանի որ ընդհանուր ծախսերը նվազեցվում են վարչական բյուջեի պահուստային ֆոնդից կատարված հատկացումների և ֆոնդային բյուջեի եկամուտ համարվող ակտիվների իրացումից ստացվող մուտքերի չափով:

եկամուտների հավաքագրման փաստացի ցուցանիշը տարեկան ճշտված պլանի ցուցանիշի նկատմամբ կատարվել է ընդամենը 0.6%-ով: Վարչական բյուջեով փաստացի ծախսերի կատարողականը տարեկան ճշտված պլանի ցուցանիշի նկատմամբ կազմել է 77.7%: Ֆոնդային բյուջեով ծախսերի փաստացի կատարողականը տարեկան ճշտված պլանի նկատմամբ կազմել է 9.3%:

Երևանի 2019թ. բյուջեն փաստացի արդյունքներով կատարվել է աննախադեպ՝ 8.3 մլրդ դրամ հավելուրդով, ճշտված պլանով նախատեսված 8.3 մլրդ դրամ պակասուրդի փոխարեն: Առաջացած այսպիսի մեծ հավելուրդի հիմնական պատճառն է թե՛ գործառնական դասակարգման, թե՛ տնտեսագիտական դասակարգման գրեթե բոլոր ծախսային հոդվածների թերակատարումը: Ծախսերի թերակատարման արդյունքում ձևավորվել է շոշափելի գումարի ազատ մնացորդ:


Երևանի բյուջեի փաստացի կատարողականը և՛ ընդհանուր եկամուտների մասով, և՛ ընդհանուր ծախսերի մասով ավելի մոտ է հաստատված պլանի ցուցանիշներին, քան ճշտված պլանի ցուցանիշներին: Նույնն է նկատվում նաև առանձին եկամտային և ծախսային գրեթե բոլոր հոդվածների մասով: **Այս պատկերը ձևավորվել է Երևանի քաղաքապետարանի պատասխանատուների ոչ արդյունավետ կառավարման հետևանքով:**

2. ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

2019-ին Երևանի բյուջեի փաստացի եկամուտները կազմել են 75.0 մլրդ դրամ: Փաստացի հավաքագրված ընդհանուր եկամուտների 22.7%-ը կամ 17.0 մլրդ դրամը ձևավորվել է **հարկերի և տուրքերի հաշվին**: Ընդ որում, *անշարժ գույքի գույքահարկից* ստացվել է ընդհանուր եկամուտների 7.0%-ը կամ 5.3 մլրդ դրամ, *այլ գույքերի գույքահարկից*՝ 10.6%-ը կամ 7.9 մլրդ դրամ, *տեղական տուրքերից*՝ 4.4%-ը կամ 3.3 մլրդ դրամ, իսկ *համայնքային բյուջե վճարվող պետական տուրքերից*՝ 0.7%-ը կամ 0.5 մլրդ դրամ: **2019-ին Երևանի բյուջեի փաստացի եկամուտների 29.5%-ը կամ 22.1 մլրդ դրամը ստացվել է պաշտոնական դրամաշնորհների հաշվին**: Ընդ որում, 13.4 մլրդ դրամը ձևավորվել է *պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներից*, իսկ 8.7 մլրդ դրամը՝ *պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներից*: **Այլ եկամուտների հաշվին փաստացի մուտքերը Երևանի բյուջե կազմել է 35.9 մլրդ դրամ, որը ընդհանուր եկամուտների 47.8%-ն է**: Ընդ որում, 0.1 մլրդ դրամը ստացվել է *շահաբաժնից*, 1.2 մլրդ դրամը՝ *գույքի վարձակալության դիմաց եկամուտներից*, 27.9 մլրդ դրամը՝ *ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից*

համայնքային բյուջե եկամուտներից, 5.4 մլրդ դրամը՝ վարչական գանձումներից, 0.5 մլրդ դրամը՝ տույժերից և տուգանքներից, իսկ 0.8 մլրդ դրամը՝ այլ եկամուտներից:

**Գծապատկեր 1. 2019թ. Երևանի բյուջեի եկամուտների կառուցվածքը
(ճշտված և փաստացի ցուցանիշները), %**



Տարեկան ճշտված պլանը և՛ ընդամենը եկամուտների, և՛ դրա բաղադրիչ հանդիսացող բոլոր հոդվածների գծով գերազանցում է տարեկան հաստատված պլանը, բայց փաստացի կատարողականները ավելի մոտ են տարեկան հաստատված պլանին:

**Աղյուսակ 2. Երևանի 2019թ. բյուջեի եկամուտները՝
ըստ ձևավորման աղբյուրների, մլն դրամ**

Եկամտատեսակները	Տարեկան հաստատված պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստացի	Կատարման %-ը հաստատված պլանի նկատմամբ	Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ
Եկամուտներ, այդ թվում՝	83,077.6	86,408.8	75,030.7	90.3%	86.8%
Հարկեր և տուրքեր, այդ թվում՝	15,747.3	15,822.7	17,025.2	108.1%	107.6%
Գույքային հարկեր անշարժ գույքից	5,545.3	5,545.3	5,277.3	95.2%	95.2%
Գույքային հարկեր այլ գույքից	7,113.1	7,113.1	7,904.4	111.1%	111.1%
Տեղական տուրքեր	2,697.0	2,772.4	3,306.5	122.6%	119.3%
Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր	392.0	392.0	537.0	137.0%	137.0%
Պաշտոնական դրամաշնորհներ	23,850.1	24,133.1	22,146.0	92.9%	91.8%
Այլ եկամուտներ, այդ թվում՝	43,480.2	46,453.1	35,859.5	82.5%	77.2%
Գույքի վարձակալությունից	1,101.1	1,101.1	1,154.9	104.9%	104.9%
Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից (պատվիրակված լիազորություններ)	35,286.6	38,202.3	27,914.5	79.1%	73.1%
Վարչական գանձումներ	5,745.3	5,802.4	5,363.3	93.4%	92.4%
Տույժեր, տուգանքներ	518.2	518.2	467.4	90.2%	90.2%
Շահաբաժիններ	83.0	83.0	124.3	149.8%	149.8%
Այլ եկամուտներ	734.1	734.1	829.4	113.0%	113.0%
Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	12.0	12.0	5.7	47.5%	47.5%

Ընդամենը եկամուտների մեջ հարկեր և տուրքերը միակ հոդվածն է, որը չի թերակատարվել ճշտված պլանի և հաստատված պլանի ցուցանիշների նկատմամբ: Այսպես, ըստ տարեկան ճշտված պլանի՝ *հարկեր և տուրքերը* նախատեսվել են 15.8 մլրդ դրամ, իսկ փաստացի կատարողականը կազմել է 17.0 մլրդ դրամ: Այս հոդվածի փաստացի կատարողականը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 107.6%, գերակատարվել է 1.2 մլրդ դրամով: Տարեկան հաստատված պլանի (15.7 մլրդ դրամ) նկատմամբ «հարկեր և տուրքեր» հոդվածի փաստացի կատարողականը

կազմել է 108.1%, գերակատարվել է 1.3 մլրդ դրամով: *Հարկեր և տուրքեր* հոդվածի փաստացի կատարողականի գերակատարումը տարեկան ճշտված պլանի նկատմամբ հիմնականում պայմանավորված է *տեղական տուրքերից ստացված միջոցների* 0.5 մլրդ դրամ գերակատարումով (փաստացի ցուցանիշը կազմել է 3.3 մլրդ դրամ, իսկ տարեկան ճշտված պլանը՝ 2.8 մլրդ դրամ), *համայնքային բյուջե վճարվող պետական տուրքերի* 0.1 մլրդ դրամ գերակատարումով (փաստացի ցուցանիշը կազմել է 0.5 մլրդ դրամ, իսկ տարեկան ճշտված պլանը՝ 0.4 մլրդ դրամ), ինչպես նաև *փոխադրամիջոցներից ստացված գույքահարկի* 0.8 մլրդ դրամ գերակատարումով (փաստացի ցուցանիշը կազմել է 7.9 մլրդ դրամ, իսկ տարեկան ճշտված պլանը՝ 7.1 մլրդ դրամ): **Հարկ է նշել, որ փոխադրամիջոցներից ստացված գույքահարկի գերակատարումը պայմանավորված է 2019-ին մեքենաների՝ ՀՀ ներկրման աննախադեպ աճով:** *Հարկեր և տուրքեր* հոդվածում *անշարժ գույքից ստացվող գույքահարկի վճարների* մասով փաստացի ցուցանիշը շուրջ 0.3 մլրդ դրամով թերակատարվել է ճշտված պլանի ցուցանիշի նկատմամբ (փաստացի ցուցանիշը կազմել է 5.3 մլրդ դրամ, իսկ տարեկան ճշտված պլանը շուրջ՝ 5.5 մլրդ դրամ):

Ընդամենը եկամուտների մեջ պաշտոնական դրամաշնորհներ հոդվածը փաստացի ստացված արդյունքներով թերակատարվել է ճշտված պլանի և հաստատված պլանի նկատմամբ: 2019-ին պաշտոնական դրամաշնորհներից մուտքերը փաստացի կազմել են 22.1 մլրդ դրամ, ինչը ճշտված պլանի նկատմամբ (24.1 մլրդ դրամ) կատարվել է 91.8%-ով: *Պաշտոնական դրամաշնորհներ* հոդվածի փաստացի կատարողականը հաստատված պլանի ցուցանիշի նկատմամբ (23.9 մլրդ դրամ) կազմել է 92.9%: Այս հոդվածում, ըստ տարեկան ճշտված պլանի և տարեկան հաստատված պլանի՝ պետք է ստացվեր 1.4 մլրդ դրամի *կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ միջազգային կազմակերպություններից*, սակայն փաստացի ցուցանիշով ընդհանրապես գումար չի ստացվել:

Երևան քաղաքի 2019թ. բյուջեով նախատեսվել էր *այլ եկամուտներից* մուտքեր՝ ըստ ճշտված պլանի ցուցանիշի 46.5 մլրդ դրամի չափով, իսկ ըստ հաստատված պլանի ցուցանիշի՝ 43.5 մլրդ դրամի չափով, սակայն փաստացի արդյունքներով մուտքերն այլ եկամուտներից կազմել են 35.9 մլրդ դրամ: Այսինքն՝ այլ եկամուտներից մուտքերը փաստացի արդյունքներով թերակատարվել են ճշտված պլանի ցուցանիշի նկատմամբ 10.6 մլրդ դրամով, հաստատված պլանի ցուցանիշի նկատմամբ՝ 7.6 մլրդ դրամով: Այլ կերպ ասած՝ փաստացի ցուցանիշը ճշտված պլանի նկատմամբ կատարվել է 77.2%-ով, իսկ հաստատված պլանի նկատմամբ՝ 82.5%-ով: Այս հոդվածում փաստացի արդյունքներով ճշտված պլանի ցուցանիշի նկատմամբ թերակատարվել են *համայնքային բյուջե ապրանքների մատակարարումից և*


ծառայությունների մատուցումից եկամուտները, որն ըստ փաստացի ցուցանիշի կազմել է 27.9 մլրդ դրամ, իսկ ճշտված պլանի ցուցանիշը կազմել էր 38.2 մլրդ դրամ: Փաստացի կատարողականով ճշտված պլանի ցուցանիշի նկատմամբ 0.4 մլրդ դրամով թերակատարվել են վարչական գանձումները:

Հարկ է նաև նշել, որ Երևանի բյուջեի սեփական եկամուտները 2019-ին փաստացի արդյունքներով կազմել են 25.0 մլրդ դրամ, իսկ կատարողականը ճշտված պլանի ցուցանիշի նկատմամբ (24.1 մլրդ դրամ) կազմել է 103.9%:

3. ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

2019 թվականին Երևանի բյուջեի միջոցների հաշվին փաստացի իրականացվել է 66.8 մլրդ դրամի ծախսեր: Փաստացի ծախսերից 65.6 մլրդ դրամը կամ 98.2%-ը ուղղվել են *ընթացիկ ծախսերին (վարչական բյուջե)*, իսկ 1.2 մլրդ դրամը կամ 1.8%-ը՝ *կապիտալ բնույթի զուտ ծախսերին (ֆոնդային բյուջե)*: Հատկանշական է այն փաստը, որ թե՛ ընթացիկ ծախսերը, թե՛ կապիտալ բնույթի զուտ ծախսերը փաստացի արդյունքներով թերակատարվել են ճշտված պլանի և հաստատված պլանի նկատմամբ: Այսպես, ընթացիկ ծախսերը ճշտված պլանի նկատմամբ թերակատարվել են 16.8 մլրդ դրամով, իսկ հաստատված պլանի նկատմամբ թերակատարվել են 13.0 մլրդ դրամի չափով: Ավելի խնդրահարույց է կապիտալ բնույթի զուտ ծախսերի թերակատարումը: Այսպես, փաստացի կապիտալ ծախսերը ճշտված պլանի նկատմամբ թերակատարվել են 11.1 մլրդ դրամով, կամ կատարողականը կազմել է 9.8%, իսկ տարեկան հաստատված պլանի նկատմամբ թերակատարումը կազմել է շուրջ 4.6 մլրդ դրամ, կամ կատարողականը կազմել է 20.7%:

Գծապատկեր 2. Երևան քաղաքի 2019թ. բյուջեի ծախսերի կառուցվածքը (ճշտված և փաստացի ցուցանիշները), %



Ըստ Երևանի 2019թ. բյուջեի կատարողականի, *տնտեսագիտական դասակարգման ծախսերը բոլոր հոդվածներով թերակատարվել են ճշտված պլանի նկատմամբ*: Տնտեսագիտական դասակարգման ծախսերի մեջ փաստացի ամենաշատ գումարը ծախսվել է *սուբսիդիաներ* հոդվածի վրա՝ 36.3 մլրդ դրամ, որը կազմում է ընդհանուր ծախսերի 54.3%-ը: Փաստացի ստացվում է, որ Երևանի բյուջեի կատարողականով բյուջետային ծախսերի կեսից ավելին բաժին է ընկնում միայն սուբսիդիաներին: Նշված հոդվածի ծախսերի կատարողականը տարեկան հաստատված պլանի նկատմամբ կազմել է 100.7%, իսկ տարեկան ճշտված պլանի նկատմամբ՝ 97.7%: Չնայած այն հանգամանքին, որ հաստատված պլանի նկատմամբ փաստացի ցուցանիշը գերակատարվել է, հատկանշական է այն փաստը, որ փաստացի կատարողականը ավելի մոտ է հենց տարեկան հաստատված պլանի ցուցանիշին:

Աղյուսակ 3. Երևանի 2019թ. բյուջեի ծախսերի կատարողականը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման, մլն դրամ


Երևանի բյուջեի տնտեսագիտական դասակարգման հոդվածները	Տարեկան հաստատված պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստացի	Կատարման %-ը հաստատված պլանի նկատմամբ	Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ
Ընդամենը	84,346.8	94,690.7	66,760.8	79.2%	70.5%
Ընթացիկ ծախսեր	78,542.9	82,420.0	65,575.1	83.5%	79.6%
Աշխատանքի վարձատրություն	7,713.5	8,588.0	7,820.7	101.4%	91.1%
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	16,045.3	14,772.7	11,139.6	69.4%	75.4%
Սուբսիդիաներ	36,004.3	37,093.9	36,257.6	100.7%	97.7%
Դրամաշնորհներ	114.0	295.6	291.2	255.5%	98.5%
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	934.8	911.4	694.4	74.3%	76.2%
Այլ ծախսեր	17,731.1	20,758.4	9,371.7	52.9%	45.1%
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	5,803.9	12,270.6	1,185.7	20.7%	9.8%
Հիմնական միջոցներ	9,101.6	15,568.3	7,448.7	81.8%	47.8%
Պաշարներ	72.4	72.4	0.0	0%	0%
Հիմնական միջոցների իրացումից մուտքեր	-320.0	-320.0	-669.9	209.3%	209.3%
Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր	-3,050.0	-3,050.0	-5,593.1	183.4%	183.4%

Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման համար 2019-ին փաստացի ծախսվել է 11.1 մլրդ դրամ: Այս հոդվածի կատարողականը տարեկան ճշտված պլանի նկատմամբ կազմել է 75.4%, իսկ տարեկան հաստատված պլանի նկատմամբ կազմել է 69.4%: Հատկանշական է, որ ըստ Երևանի 2018թ. բյուջեի կատարողականի, այս հոդվածով ծախսվել է ավելի շատ գումար (14.4 մլրդ դրամ), քան 2019-ին:

Ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներից **աշխատանքի վարձատրության** համար 2019-ին փաստացի ծախսվել է 7.8 մլրդ դրամ, ինչը 2018-ի նույն ցուցանիշի համեմատ ավելի է շուրջ 31.5%-ով կամ 1.9 մլրդ դրամով: 2019-ին աշխատանքի վարձատրության համար փաստացի ծախսված գումարը (7.8 մլրդ դրամ) կազմում է սեփական եկամուտների 31.3%-ը: 2019-ին 2018-ի համեմատ մեծ աճ են գրանցել այս հոդվածի մաս հանդիսացող **պարգևատրումներին, դրամական խրախուսումներին և հաբուկ վճարներին** ուղղված ծախսերը: 2018-ին նշված ուղղություններով կատարված ծախսերի համար տրամադրվել է շուրջ 0.6 մլրդ դրամ, իսկ 2019-ին այդ թիվը աճել է՝

հասնելով 1.9 մլրդ դրամի (աճը կազմել է 1.3 մլրդ դրամ կամ 216.7%): Չնայած այն հանգամանքին, որ Երևանի քաղաքապետարանի թե՛ ֆինանսական ոլորտի և թե՛ քաղաքապետարանի կառավարման այլ մարմինների կողմից կատարված աշխատանքները 2019-ին ունեցել են մի շարք թերացումներ, ինչի արդյունքում առկա է փաստացի կատարված ծախսերի մեծ թերակատարում՝ Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների աշխատակազմերի աշխատողների պարգևատրման գծով ծախսերը կազմել են 1.7 մլրդ դրամ (հաստատված պլանի 1.9 մլրդ դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 87.0%): 2019թ. պարգևատրման գծով ծախսերը գերազանցում են 2018-ի փաստացի կատարողական ցուցանիշը 1.1 մլրդ դրամով կամ 130.0%-ով:

Գծապատկեր 3. Երևանի 2019թ. բյուջեի ընթացիկ ծախսերի կառուցվածքը ճշտված և փաստացի տվյալներով, %



Հիմնական միջոցների ձեռքբերմանն ուղղված ծախսերը նույնպես թերակատարվել են: Այստեղ հատկանշական է այն փաստը, որ այս հոդվածի փաստացի կատարողականը (7.5 մլրդ դրամ) ճշտված պլանի ցուցանիշի նկատմամբ կազմում է 47.8%, իսկ հաստատված պլանի նկատմամբ կազմել է 81.8%: Ուշագրավ է, որ 2019 թվականին այս հոդվածի 47.5%-ը կամ 3.5 մլրդ դրամը ուղղվել է մեքենաների

և սարքավորումների ձեռքբերմանը: 2018-ին մեքենաների և սարքավորումների ձեռքբերման համար տրամադրվել էր փաստացի շուրջ 1.0 մլրդ դրամ, որը *հիմնական միջոցներ* հոդվածին ուղղված փաստացի ծախսերի 27.8%-ն էր կազմում:

Ծախսերի տնտեսագիտական դասակարգման մեջ կան նաև մուտքեր (բացասական ծախսեր)՝ ստացված ակտիվների իրացումից: Ընդ որում, փաստացի մուտքերը *հիմնական միջոցների և չարտադրված ակտիվների իրացումից* գերակատարվել են թե՛ ճշտված պլանի և թե՛ հաստատված պլանի նկատմամբ:

Նշենք նաև, որ ըստ Երևանի 2019թ. բյուջեի կատարողականի արդյունքների՝ փաստացի ծախսերը գործառնական դասակարգման բոլոր հոդվածներով թերակատարվել են տարեկան ճշտված պլանի նկատմամբ: Բացի այդ, գործառնական դասակարգման հոդվածների մեծ մասը (բացի *հանգիստ, մշակույթ և կրոն* հոդվածից) թերակատարվել են նաև տարեկան հաստատված պլանի նկատմամբ:

Երևան քաղաքի 2019 թվականի բյուջետային ծախսերի մեջ գերակշիռ մաս են կազմում *սոցիալական ոլորտի ծախսերը*, որոնց տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերի մեջ կազմում է 49.6%: *Տնտեսական ծառայություններին ուղղված ծախսերի* մասնաբաժինը 27.5% է, *ընդհանուր նշանակության ծառայություններին ուղղված ծախսերին*՝ 12.6%, իսկ *հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդը* կազմում է ընդհանուր ծախսերի 10.3%-ը:

Աղյուսակ 4. Երևանի 2019թ. բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման, մլն դրամ²

Երևանի բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման հոդվածները	Տարեկան հաստատված պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստացի	Կատարման %-ը հաստատված պլանի նկատմամբ	Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	9,605.5	9,810.8	8,408.6	87.5%	85.7%
Պաշտպանություն	40.5	57.0	38.7	95.8%	67.9%
Տնտեսական հարաբերություններ	15,456.0	14,497.8	3,408.4	22.1%	23.5%
Շրջակա միջավայրի պաշտպանություն	10,106.3	13,842.3	9,414.2	93.2%	68.0%
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	6,989.6	8,931.4	5,512.1	78.9%	61.7%
Առողջապահություն	380.0	380.0	299.8	78.9%	78.9%
Հանգիստ, մշակույթ և կրոն	3,241.8	3,810.4	3,302.1	101.9%	86.7%
Կրթություն	29,525.1	29,980.9	28,087.6	95.1%	93.7%
Սոցիալական պաշտպանություն	2,114.8	2,051.4	1,439.5	68.1%	70.2%
Պահուստային ֆոնդ	6,887.3	11,328.7	6,849.7	99.5%	60.5%
Ընդամենը	84,346.8	94,690.7	66,760.8	79.2%	70.5%

Ընդհանուր նշանակության ծառայությունների խմբի մեջ են մտնում ընդհանուր բնույթի *հանրային ծառայություններ և պաշտպանություն* հոդվածները: Նշված երկու հոդվածների վրա կատարված փաստացի ծախսերը թերակատարվել են թե՛ ճշտված պլանի, թե՛ հաստատված պլանի նկատմամբ: Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին ուղղված փաստացի ծախսերը կազմել են 8.4 մլրդ դրամ, կատարողականը տարեկան ճշտված պլանի նկատմամբ կազմել է 85.7%, իսկ տարեկան հաստատված պլանի նկատմամբ՝ 87.5%: **Հատկանշական է այն, որ այս հոդվածի փաստացի կատարողականը ավելի մոտ է տարեկան հաստատված պլանին, քան տարեկան ճշտված պլանին:** Սա նորից վկայում է, որ քաղաքապետարանի կողմից տարեկան ճշտված պլանի գնահատման համար կատարված աշխատանքները անարդյունավետ են եղել:

Տնտեսական ծառայությունների մեջ են մտնում *տնտեսական հարաբերություններ, շրջակա միջավայրի պաշտպանություն և բնակարանային*

² Թվերի կլորացման հետևանքով աշխատանքում ի հայտ են գալիս որոշակի շեղումներ, տասնորդական թվերի տեսքով:

շինարարություն և կոմունալ ծառայություններ հոդվածները: Այսպես, շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված ծախսերը 2019-ին փաստացի ցուցանիշով կազմել են 9.4 մլրդ դրամ, այն տարեկան ճշտված պլանի նկատմամբ կատարվել է 68.0%-ով, իսկ տարեկան հաստատված պլանի նկատմամբ՝ 93.2%-ով: Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ հոդվածին ուղղված ծախսերը կազմել են 5.5 մլրդ դրամ: Այս հոդվածին ուղղված ծախսերի փաստացի կատարողականը տարեկան ճշտված պլանի նկատմամբ կազմել է 61.7%, տարեկան հաստատված պլանի նկատմամբ՝ 78.9%: Տնտեսական հարաբերություններին ուղղված ծախսերը փաստացի կազմել են 3.4 մլրդ դրամ, այն տարեկան ճշտված պլանի նկատմամբ կատարվել է 23.5%-ով, իսկ տարեկան հաստատված պլանի նկատմամբ՝ 22.1%-ով: Ի դեպ, **տնտեսական հարաբերություններ հոդվածը միակն է տնտեսական ծառայություններ խմբի մեջ, որին ուղղված ծախսերի փաստացի կատարողականը ավելի բարձր է տարեկան ճշտված պլանի նկատմամբ, քան տարեկան հաստատված պլանի նկատմամբ:**

Տնտեսական հարաբերությունների մեջ են մտնում *տրանսպորտ, էներգետիկա, գյուղատնտեսություն և զբոսաշրջություն* ճյուղերին ուղղված ծախսերը, ինչպես նաև այլ դասերին չպատկանող տնտեսական հարաբերություններ ենթահոդվածը: Տրանսպորտի ճյուղին ուղղված փաստացի ծախսերը 2019-ին կազմել են 8.7 մլրդ դրամ, ինչը տարեկան ճշտված պլանի նկատմամբ (12.5 մլրդ դրամ) կատարվել է 69.4%-ով: **էներգետիկային ուղղված ծախսերը փաստացի կազմել են 0.05 մլրդ դրամ: Նշված ճյուղին ուղղված ծախսերի տարեկան հաստատված պլանը կազմել էր 4.1 մլրդ դրամ, իսկ տարեկան ճշտված պլանը՝ 3.9 մլրդ դրամ: Երևանի քաղաքապետարանը արդեն երկրորդ տարին անընդմեջ այս ճյուղին ուղղված ծախսերի իրականացման հետ կապված թերանում է (2018-ին նույնպես այս ճյուղին ուղղված ծախսերի կատարողականի և հաստատված պլանի ու ճշտված պլանի ցուցանիշների տարբերությունն ահռելի էր):** Գյուղատնտեսության ճյուղին ուղղված ծախսերը 2019-ին կազմել են 0.05 մլրդ դրամ: Այս ճյուղում նույնպես առկա է թերակատարում: Ճշտված պլանի ցուցանիշի նկատմամբ փաստացի կատարողականը կազմել է 28.2%: Զբոսաշրջության ճյուղին ուղղված փաստացի ծախսերը կազմել են 0.02 մլրդ դրամ: Այս ճյուղին ուղղված փաստացի ծախսերի կատարողականը ճշտված պլանի նկատմամբ կազմել է՝ 15.6%: Այլ դասերին չպատկանող տնտեսական հարաբերություններից ֆինանսական մուտքերը փաստացի ցուցանիշով կազմել են 5.4 մլրդ դրամ:

Սոցիալական ծառայությունների մեջ են մտնում *առողջապահություն, հանգիստ մշակույթ և կրոն, կրթություն և սոցիալական պաշտպանություն* հոդվածները:

Առողջապահության ոլորտին ուղղված ծախսերը 2019-ին կազմել են 0.3 մլրդ դրամ: Փաստացի կատարողականը թե՛ հաստատված պլանի, թե՛ ճշտված պլանի նկատմամբ կազմել է 78.9%: **Հանգիստ, մշակույթ և կրոն ճյուղին ուղղված ծախսերը կազմել են 3.3 մլրդ դրամ: Այս հոդվածը միակն է գործառնական դասակարգման ծախսերի մեջ, որ հաստատված կամ ճշտված պլանի ցուցանիշներից գոնե մեկի, այս դեպքում՝ հաստատված պլանի, նկատմամբ գերակատարվել է:** Այսպես, այս հոդվածի կատարողականը հաստատված պլանի նկատմամբ կազմել է 101.9%, իսկ տարեկան ճշտված պլանի նկատմամբ՝ 86.7%: **Կրթության ոլորտին ուղղված ծախսերը 2019-ին կազմել են 28.1 մլրդ դրամ: Գործառնական դասակարգման ծախսերի մեջ այս հոդվածին ամենաշատ գումարն է հատկացվել, սակայն այստեղ նույնպես առկա է թերակատարում և՛ ճշտված պլանի, և՛ հաստատված պլանի նկատմամբ:** Նշված ճյուղին ուղղված ծախսերի փաստացի կատարողականը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 93.7%, իսկ հաստատված պլանի նկատմամբ՝ 95.1%: Այս ճյուղին ուղղված ծախսերը հիմնականում ներկայացնում են պետության կողմից պատվիրակված լիազորություններ: 2019թ. սոցիալական պաշտպանությանն ուղղված փաստացի ծախսերը կազմել են 1.4 մլրդ դրամ, կատարողականը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 70.2%, իսկ հաստատված պլանի նկատմամբ՝ 68.1%:

Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեով նախատեսված վարչական մասի **պահուստային ֆոնդը** կազմել է 6.9 մլրդ դրամ: Այս գումարից 0.02 մլրդ դրամ հատկացվել է չորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածություններից զրկված բնակիչներին՝ որպես վարձակալած բնակարանների վարձավճար: Նշված գումարից 6.8 մլրդ դրամն ուղղվել է Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման երկրորդ ծրագրի իրականացմանը, ինչը նորից ենթադրում է պատվիրակված լիազորություն³:

Կանաչ տարածքների հիմնում և պահպանում ծրագրով 2019-ին փաստացի ծախսվել է 1.4 մլրդ դրամից ավելի, որից շուրջ 1.4 մլրդ դրամը ուղղվել է Երևան քաղաքի բոլոր վարչական շրջանների կանաչ տարածքների պահպանման աշխատանքներին: Նշված գործառույթների իրականացման համար **2020թ. բյուջեով նախատեսվել է «Կանաչապատում և շրջակա միջավայրի պաշտպանություն» ՀՈԱԿ-ի ստեղծումը: Հատկանշական է այն փաստը, որ 2020-ի բյուջեով նշված ՀՈԱԿ-ին կհատկացվի 3.4 մլրդ դրամ: Համեմատելով կանաչ տարածքների հիմնում և պահպանում ծրագրով 2019-ին ուղղված ծախսերի չափը 2020-ին**

³ Վարչական մասի պահուստային ֆոնդից բյուջեի ֆոնդային մաս գումար չի հատկացվել:

վերոհիշյալ ՀՈԱԿ-ին հատկացվելիք գումարի հետ՝ այս ՀՈԱԿ-ի ստեղծման անհրաժեշտության առնչությամբ հարց է առաջանում:

4. ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ


2019 թվականին Երևանի բյուջեն կատարվել է աննախադեպ՝ 8.3 մլրդ դրամ հավելուրդով: Ըստ ճշտված պլանի 2019-ին Երևանի բյուջեն պետք է կատարվեր 8.3 մլրդ դրամ պակասուրդով, իսկ ըստ հաստատված պլանի՝ 1.3 մլրդ դրամ պակասուրդով: Ստացվում է, որ 2019-ին Երևանի բյուջեի պակասուրդը ճշտված պլանից շեղվել է 16.6 մլրդ դրամով, իսկ հաստատված պլանից շեղումը կազմել է 9.5 մլրդ դրամ:

Աղյուսակ 5. Երևանի 2019թ.բյուջեի ամփոփ ցուցանիշները, մլն դրամ

	Տարեկան հաստատված պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստացի	Կատարման %-ը տարեկան հաստատված պլանի նկատմամբ	Կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ
Եկամուտներ	83,077.6	86,408.8	75,030.7	90.3%	86.8%
Ծախսեր	84,346.8	94,690.7	66,760.8	79.2%	70.5%
Դեֆիցիտ (Պակասուրդ)	-1,269.2	-8,281.9	8,269.9	-	-

2019 թվականին Երևանի վարչական մասի բյուջեն 9.4 մլրդ դրամ հավելուրդով է եղել, իսկ ֆոնդային մասը՝ 1.1 մլրդ դրամ պակասուրդով, ինչի արդյունքում ձևավորվել է 8.3 մլրդ դրամ հավելուրդը:

Գծապատկեր 4. Երևանի 2019թ. բյուջեի պակասուրդը և ֆինանսավորման աղբյուրները ճշտված և փաստացի տվյալներով, %



Հատկանշական է այն փաստը, որ թե՛ 2018-ին և թե՛ 2019-ին Երևանի բյուջեն հավելուրդով է եղել: **Երևանի 2019թ. բյուջեի աննախադեպ հավելուրդը հիմնականում պայմանավորված է եկամուտների համեմատ ծախսերի ավելի ցածր կատարողականով, որը, միանշանակ, անարդյունավետ կառավարման արդյունք է:**

5. ԱՄՓՈՓՈՒՄ

Երևանի 2019 թվականի բյուջեն թե՛ եկամուտների մասով և թե՛ ծախսերի մասով թերակատարվել է: Բյուջեի ճշտված պլանի և փաստացի կատարողական ցուցանիշների համեմատությամբ պարզ է դառնում, որ եկամուտների մասով թերակատարումը կազմել է շուրջ 13.2%, իսկ ծախսերի մասով՝ 29.5%: Այսպես, 2019-ին փաստացի արդյունքներով եկամուտների հավաքագրումը, որը կազմում է 75.0 մլրդ դրամ, թերակատարվել է պաշտոնական դրամաշնորհներ և այլ եկամուտներ հոգվածներով: **Պաշտոնական դրամաշնորհներ հոգվածի կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ միջազգային կազմակերպություններից ենթահոդվածով ըստ ճշտված պլանի պետք է ստացվեր 1.4 մլրդ դրամ, սակայն, փաստացի արդյունքներով, ընդհանրապես գումար չի ստացվել: Հարկեր և տուրքեր հոգվածով փաստացի արդյունքներով եկամուտների հավաքագրումը գերակատարվել է, ինչը հիմնականում պայմանավորված է փոխադրամիջոցներից**

ստացված գույքահարկի գերակատարմամբ (գերակատարումը՝ 0.8 մլրդ դրամ): Այս փաստը կապված է 2019-ին ՀՀ ներկրվող մեքենաների աննախադեպ աճի հետ: Հարկ է նշել, որ ներկրված մեքենաների մեծ մասը դուրս է բերվել ՀՀ-ից ԵԱՏՄ երկրներ, այսինքն՝ այդ մեքենաների համար գույքահարկի ստացումն ապագա ժամանակահատվածի համար այլևս կարելի է համարել անիրատեսական:

Փաստացի կատարված ծախսերը 2019-ին կազմել են շուրջ 66.8 մլրդ դրամ, որը ճշտված պլանի ցուցանիշից պակաս է 27.9 մլրդ դրամով: Ծախսերի այսպիսի մեծ թերակատարումը իսկապես աննախադեպ է Երևանի պատմության մեջ: Փաստացի ծախսերի թերակատարումը կապված է թե՛ գործառնական և թե՛ տնտեսագիտական դասակարգման ծախսային գրեթե բոլոր հոդվածների թերակատարման հետ: Նույնիսկ 2018-ին, երբ որոշ ժամանակ Երևանը քաղաքապետ չուներ և որոշ ծախսեր օբյեկտիվորեն չէին կատարվում, ծախսերի այսպիսի մեծ թերակատարում չի արձանագրվել: Կատարված ծախսերի մեջ հատկանշական է տնտեսական հարաբերությունների էներգետիկայի ճյուղին ուղղված ծախսերի փաստացի կատարողականը, որը կազմել է 0.05 մլրդ դրամ, այն դեպքում, որ նշված ճյուղին ուղղված ծախսերի տարեկան հաստատված պլանը կազմել էր 4.1 մլրդ դրամ, իսկ տարեկան ճշտված պլանը՝ 3.9 մլրդ դրամ: Երևանի քաղաքապետարանը արդեն երկրորդ տարին անընդմեջ (2018-ին նույնպես) այս ճյուղին ուղղված ծախսերի իրականացման հետ կապված թերանում է:

Բավական խնդրահարույց է կապիտալ ծախսերի կատարողականը: 2019-ի համար բյուջեով պլանավորված 5.8 մլրդ դրամը ճշգրտման արդյունքում դարձել է 12.3 մլրդ դրամ, սակայն փաստացի իրականացվել է ընդամենը 1.2 մլրդ դրամը: Երևան քաղաքի մի շարք կարևորագույն խնդիրների լուծման համար (քաղաքային տրանսպորտ, վերելակներ, մետրո և այլն) անհրաժեշտ են մեծածավալ կապիտալ ներդրումներ, որոնք պետք է մաս-մաս իրականացնել՝ յուրաքանչյուր տարի վերջնական արդյունք ստանալու համար: Սակայն, կապիտալ ծախսերի փաստացի ցուցանիշը թույլ է տալիս արձանագրել, որ Երևան քաղաքի կարևոր խնդիրների լուծման համար անհրաժեշտ քայլերը չեն կատարվել:

Ծախսերի թերակատարումը, ինչպես նշվում է քաղաքապետարանի կողմից ներկայացված 2019թ. բյուջետային կատարողականում, պայմանավորված է մի շարք ծրագրերի գծով առկա տնտեսումներով և որոշ պլանավորված, սակայն փաստացի չկատարված աշխատանքներով: Երևանի 2019թ. բյուջեով

հաստատված մի շարք ծրագրեր փաստացի կատարողական արդյունքներով չեն իրականացվել կամ կատարվել են ոչ ամբողջությամբ: Կարծես թե քաղաքապետարանը ծախսերի միտումնավոր թերակատարման արդյունքում հավաքել է ազատ միջոցներ՝ 2020թ. կոնկրետ ծախսեր իրականացնելու նպատակով:

Փաստացի եկամուտների և փաստացի ծախսերի տարբերությունից ձևավորվել է 8.3 մլրդ դրամի *աննախադեպ* հավելուրդ: Հարկ է նշել, որ ըստ ճշտված պլանի, բյուջեն պետք է ստացվեր պակասուրդով՝ գրեթե ներկայիս ձևավորված հավելուրդի չափով:

Համեմատելով եկամուտների և ծախսերի փաստացի կատարողականները ճշտված պլանի և հաստատված պլանի ցուցանիշների հետ, ակնհայտ է, որ փաստացի ցուցանիշները ավելի բարձր կատարողական են ցուցաբերել հաստատված պլանի նկատմամբ և՛ եկամուտների մասով, և՛ ծախսերի մասով: Վերը նկարագրված պատկերից հետևում է, որ 2019-ին Երևանի քաղաքապետարանը գործել է կառավարման ցածր արդյունավետությամբ: Այս պայմաններում Երևանի 2019թ. բյուջեից նախորդ տարիների համեմատ ավելի մեծ գումար է հատկացվել աշխատակիցների աշխատանքի վարձատրության և պարգևավճարների գծով: Միայն պարգևատրումների գծով ծախսերը 2019-ին կազմել են 1.7 մլրդ դրամ, ինչն ավելի է 2018-ի նույն ցուցանիշից 1.1 մլրդ դրամով:

Այսպիսով, վերլուծելով Երևանի 2019թ. բյուջեի ծախսերի և եկամուտների փաստացի կատարողականները թե՛ ճշտված պլանի, թե՛ հաստատված պլանի ցուցանիշների նկատմամբ, Երևանի 2020թ. հաստատված և «աննախադեպ» համարվող բյուջեի կատարումը նույնպես մտահոգիչ է դառնում:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան [ակտիվ հղման](#) տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: